

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«---» ----- 2019թ.

N\_\_\_\_-Ա

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ «ՋՈՆ ԵՎ ՍՈՍԻ ԲԱԼՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ՄԻՋԵՎ ԷՐԵԲՈՒՆԻ  
ԹԱՆԳԱՐԱՆԻ ԸՆԴԱՐՁԱԿ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին համապատասխան՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է՝**

1. Հավանություն տալ 2019 թվականի հոկտեմբերի 3-ին Երևանի քաղաքապետ Հայկ Մարությանի և «Ջոն և Սոսի Բալյան հիմնադրամի» միջև կնքված համագործակցության պայմանագրին:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ «ՋՈՆ ԵՎ ՍՈՍԻ ԲԱԼՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ՄԻՋԵՎ ԷՐԵՖՈՒՆԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԸՆԴԱՐՁԱԿ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՀԱՄԱԳՈՐԾՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Երևան քաղաքի ավագանին հաստատում է քաղաքապետի կնքած այն պայմանագրերը (ներառյալ՝ դրանց փոփոխությունները), որոնք՝ ուղղակիորեն նախատեսում են ավագանու հաստատում:

Սույն որոշման նախագծով նախատեսվում է հավանություն տալ Երևան համայնքի և «Ջոն և Սոսի Բալյան հիմնադրամի» միջև 2019 թվականի հոկտեմբերի 3-ին կնքված Էրեբունի թանգարանի ընդարձակ նախագծի վերաբերյալ համագործակցության պայմանագրին (այսուհետ՝ պայմանագիր):

Պայմանագրի նպատակն է՝ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի ընդարձակումը նոր ժամանակակից մասնաշենքի կառուցման միջոցով՝ հնարավորինս օգտագործելով գոյություն ունեցող ենթակառուցվածքը, բարելավել «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանից տպավորությունը, ստեղծելով ցուցահանդեսային տարածքներ, որոնք նորագույն տեխնոլոգիաներով և AR/VR կլինեն ընկալման հնարավորություններով հագեցված, բարձրացնել «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի և դրա հավաքածուների մասին տեղեկացվածության աստիճանը Հայաստանում և դրանից դուրս:

«Ջոն և Սոսի Բալյան հիմնադրամը» մտադիր է նվիրաբերություն կատարել Ծրագրի իրականացման համար հետևյալ պայմաններով.

Թանգարանի Ծրագրի համար հատկացված գումարի չափը չպետք է գերազանցի 1.65 մլն. ԱՄՆ դոլարի համարժեք ՀՀ դրամ, ընդ որում մոտ 1.3 մլն. ԱՄՆ դոլարի համարժեք ՀՀ դրամ կուղղվի շինարարությանը, իսկ 350 000 ԱՄՆ դոլար՝ ծառայությունների կազմակերպմանն ու հագեցվածությանը (ճարտարապետական և դիզայնի, AR/VR ցուցասրահի, ծրագրի կառավարման և այլ և չնախատեսված ծախսերի):

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի ընդարձակումը նոր ժամանակակից մասնաշենքի կառուցման միջոցով կկատարվի ոչ պակաս 3000 քմ մակերեսով հողամասի վրա:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ Երևանի ավագանու հաստատմանն է ներկայացվում «Երևան համայնքի և «Ջոն և Սոսի Բալյան հիմնադրամի» միջև Էրեբունի թանգարանի ընդարձակ նախագծի վերաբերյալ համագործակցության պայմանագրին հավանություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ «ՋՈՆ ԵՎ ՍՈՍԻ ԲԱԼՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ՄԻՋԵՎ ԷՐԵՐՈՒՆԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԸՆԴԱՐՁԱԿ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Երևան համայնքի և «Ջոն և Սոսի Բալյան հիմնադրամի» միջև Էրեբունի թանգարանի ընդարձակ նախագծի վերաբերյալ համագործակցության պայմանագրին հավանություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ

**«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ «ԶՈՆ ԵՎ ՍՈՍԻ ԲԱԼՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ՄԻՋԵՎ ԷՐԵԲՈՒՆԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԸՆԴԱՐՁԱԿ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Երևան համայնքի և «Զոն և Սոսի Բալյան հիմնադրամի» միջև Էրեբունի թանգարանի ընդարձակ նախագծի վերաբերյալ համագործակցության պայմանագրին հավանություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ**

<p align="center"><b>COOPERATION AGREEMENT</b></p>	<p align="center"><b>ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ</b></p>
<p align="center"><b>BETWEEN YEREVAN MUNICIPALITY &amp; THE “JOHN D. &amp; SOSI BALIAN FOUNDATION” FOR EREBUNI MUSEUM EXTENSION PROJECT</b></p>	<p align="center"><b>ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ «ՋՈՆ ԵՎ ՍՈՍԻ ԲԱԼԻԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ՄԻՋԵՎ ԷՐԵՔՈՒՆԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԸՆԴԱՐՁԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ</b></p>
<p>This Cooperation Agreement (the “Agreement”) between «John &amp; Sosi Balian Foundation» (henceforth “Foundation”), represented by John Dikran Balian, MD and Sosi Balian, and, Yerevan Municipality, represented by Mayor Mr. Hayk Marutyan (the “Parties”), sets forth the mutual interest of the Parties regarding implementation of the Erebuni Museum Extension Project (the “Project”) and the terms and conditions upon which the Parties intend to enter into a binding agreement for the implementation of the Renovations and Extensions of the “Erebuni Archaeological Museum-Preserve, a State Non-Commercial Organization (the “Museum”).</p>	<p>Սույն պայմանագիրը («Պայմանագիր») Երևան համայնքը՝ ի դեմս քաղաքապետ Հայկ Մարությանի և «Ջոն և Սոսի Բալյան հիմնադրամը» (այսուհետև՝ Հիմնադրամ) ում անունից հանդես է գալիս Ջոն Դիքրան Բալյանը, («Կողմեր») միջև սահմանում է Կողմերի փոխադարձ հետաքրքրությունը Էրեբունի թանգարանի ընդլայնման ծրագրի («Ծրագիր») իրագործման և այն պայմանները, որոնց պահպանմամբ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպության («Թանգարան») ընդարձակման և վերակառուցման ծրագրի իրագործման համար Կողմերը ստորագրել են սույն պայմանագիրը:</p>
<p><b>1. Background.</b> Erebuni Museum, dedicated to the history and culture of the precedent and ancient city of Yerevan, was founded on May 24, 1968 according to Resolution 225 passed by the Government of the Republic of Armenia. The artefacts and ruins discovered from the three archaeological sites of Arin Berd, Karmir Blur and Shengavit, situated in the administrative boundaries of Yerevan, were the historic, cultural, and scientific reasons for the foundation of the museum.</p> <p>The museum opened its doors to the public on October 19, 1968 to commemorate the 2750th anniversary of the founding of Erebuni (ancient Yerevan). On March 7, 2003, according to Resolution 313, passed by the Government of Armenia, Erebuni was transformed into a Historical &amp; Archaeological Culture-Preserve. Now, in conjunction with “Karmir Blur” and “Shengavit” sites, it is the only archaeological culture–preserve in Yerevan and is an important center of Urartian studies in the region.</p> <p>The museum building resembles an Urartian palace and preserves the principle of the people’s houses with external soundproof walls and a flat roof around the internal yard.</p> <p>The museum’s collection of the Erebuni Historical &amp; Archaeological Culture-Preserve includes 11,295 archeological objects relating to pre-Urartian, Urartian, Achaemenian, Hellenistic and early Armenian periods. The artefacts have been discovered during periodic, planned excavations, and occasional accidental discoveries in Arin Berd, Karmir Blur, Shengavit sites and also in other regions of Armenia.</p> <p>Every year approximately 15,000 citizens of the</p>	<p><b>1. Պատմական ակնարկ</b> Երևանի հիմնադրման պատմության «Էրեբունի» թանգարանը ստեղծվել է ՀԽՍՀ Կառավարության 1968 թ. մայիսի 24-ի թիվ 225 որոշմամբ, որի համար գիտական հիմք են հանդիսացել Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող նշանավոր 3 հնավայրերից՝ Արին բերդից, Կարմիր բլուրից և Շենգավիթից հայտնաբերված գտածոները: Հանրության առջև թանգարանն իր դռները բացել է 1968թ. հոկտեմբերի 19-ին՝ ի նշանավորումն Երևան քաղաքի 2750-րդ տարեդարձի: Այնուհետև ՀՀ կառավարության 2003թ. մարտի 7-ի N 313-Ն որոշմամբ վերանվանվելով որպես պատմահնագիտական արգելոց-թանգարան՝ Էրեբունին այսօր գործում է «Կարմիր բլուր» և «Շենգավիթ» մասնաճյուղերով՝ հանդիսանալով հանրության համար այցելելի միակ հնագիտական արգելոց-թանգարանը Երևան քաղաքում և կարևոր ուրարտագիտական կենտրոն տարածաշրջանում:</p> <p>Թանգարանի շենքը կրկնում է ուրարտական կառույցների հորինվածքը՝ պահպանելով արտաքին խուլ պատերով ու երդիկավոր հարթ կտուրներով ներքին բակի շուրջ ամփոփված ժողովրդական բնակելի տան տրամաբանական սկզբունքը:</p> <p>«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի թանգարանային հավաքածուն կազմում են Արին բերդ, Կարմիր բլուր, Շենգավիթ հնավայրերից, ինչպես նաև Հայաստանի տարբեր շրջաններից դիպվածով կամ պարբերաբար իրականացվող պեղումներից հայտնաբերված նախաուրարտական, ուրարտական, աքեմենյան, հելլենիստական և վաղ հայկական ժամանակաշրջանների վերաբերող 11 295 հնագիտական առարկաները: Յուրաքանչյուր տարի մոտ 15000 Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ և օտարերկրյա զբոսաշրջիկներ այցելում են թանգարան՝ իրենց ստացած</p>



<p>Republic of Armenia and tourists visit the museum leaving notes of their impressions in the note-registry of the museum.</p>	<p>տպավորությունների մասին գրառումներ թողնելով թանգարանի հուշամատյանում:</p>
<p><b>2. Purpose.</b></p>	<p><b>2. Նպատակ</b></p>
<p>The purpose of the Balian Foundation Erebuni Museum Extension &amp; Renovation Project is to:</p> <ul style="list-style-type: none"> <li>• build an extension to the Erebuni Historical and Archaeological Museum-Preserve through the construction of a new state-of-the art building, attached to the existing structure and internally connect the new section to the existing structure;</li> <li>• enhance the Erebuni Historical and Archaeological Museum-Preserve experience by creating the space to host exhibitions and events and new spaces utilizing the newest technologies for AR/VR experience;</li> <li>• raise the awareness of the Erebuni Historical and Archaeological Museum-Preserve and its collections within and outside of Armenia.</li> </ul>	<p>Ծրագրի նպատակն է՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի ընդարձակումը նոր ժամանակակից մասնաշենքի կառուցման միջոցով՝ հնարավորինս օգտագործելով գոյություն ունեցող ենթակառուցվածքը,</li> <li>• Բարելավել «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանից տպավորությունը, ստեղծելով ցուցահանդեսային տարածքներ, որոնք նորագույն տեխնոլոգիաներով և AR/VR կլինեն ընկալման հնարավորություններով հագեցված;</li> <li>• Բարձրացնել «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի և դրա հավաքածուների մասին տեղեկացվածության աստիճանը Հայաստանում և դրանից դուրս:</li> </ul>
<p><b>3. Terms and conditions.</b></p>	<p><b>3. Պայմաններ.</b></p>
<p>John Balian &amp; Sosi Balian intend to make a donation for the implementation of the Project under the following terms and conditions:</p> <p>(A) John D. and Sosi Balian have already established the “Balian Charitable Remainder Trust” in the USA and have reserved certain funds to implement two projects in Armenia, which will act as present Project facilitator. ;</p> <p>(B) Total funds set aside for Erebuni Museum project should not exceed \$1.65 million, besides \$1.3 M out of this amount will be allocated for construction and \$350,000 for ancillary services (architectural &amp; design, AR/VR exhibits, project management, and miscellaneous expenses);</p> <p>(C) The Balian Foundation will rely on the support of its Partners to ensure proper implementation of the Project, if the Foundation changes its implementing agent at any time it shall notify the other parties to this Agreement;  “Erebuni” Historical and Archaeological Museum’ renovation will be done by means of extension (new building) construction on a 3,000 sq meters space (not less).</p> <p>(D) Yerevan Municipality and the Erebuni Museum will cooperate fully in obtaining all necessary permissions stipulated by current effective laws, and design of the extension and renovations, besides all project development and approval processes within 2 months, and, shall accept the building after the end of construction according to existing state rules and regulations. Once winning project is chosen and approved, there will be no alterations and/or restrictions from other state entities allowed, and it will be honored by all governmental branches. Yerevan City Municipality will assist the Foundation, its project manager, the architects and</p>	<p>Ջոն Դ. Բալյանը և Սոսի Բալյանի հետ միասին, մտադիր է նվիրաբերություն կատարել Ծրագրի իրականացման համար հետևյալ պայմաններով.</p> <p>(Ա) Ջոն Դ. Բալյանը և Սոսի Բալյանը արդեն իսկ հիմնադրել են ԱՄՆ-ում «Balian Charitable Remainder Trust» հիմնադրամը, ուր նախատեսել են Հայաստանի Հանրապետությունում իրագործվելիք երկու ծրագրի համար ֆոնդեր, որն էլ հանդիսանում է Ծրագրի իրականացնողը: (Բ) Թանգարանի Ծրագրի համար հատկացված գումարի չափը չպետք է գերազանցի 1.65 մլն. ԱՄՆ դոլարի համարժեք 22 դրամ, ընդ որում մոտ 1.3 մլն. ԱՄՆ դոլարի համարժեք 22 դրամ կուղղվի շինարարությանը, իսկ 350 000 ԱՄՆ դոլար՝ ծառայությունների կազմակերպմանն ու հագեցվածությանը (ճարտարապետական և դիզայնի, AR/VR ցուցասրահի, ծրագրի կառավարման և այլ և չնախատեսված ծախսերի),</p> <p>(Գ) Ծրագրի պատշաճ իրագործման հարցում Հիմնադրամը կապավիճի իր գործընկերներին, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի ընդարձակումը նոր ժամանակակից մասնաշենքի կառուցման միջոցով կկատարվի ոչ պակաս 3000 քմ մակերեսով հողամասի վրա,</p> <p>(Դ) Երևան համայնքը և Թանգարանը լիարժեք կհամագործակցեն Ծրագրի իրագործման համար 22 օրենսդրությամբ պահանջվող բոլոր անհրաժեշտ թույլտվությունների ձեռք բերման ուղղությամբ: Թանգարանի պահպանման գոտու տարածքում հողային, շինարարական և այլ տեսակի աշխատանքների իրականացումը կատարվում է 22 կառավարության լիազորած մարմնի թույլտվությամբ: Երևան համայնքը և Թանգարանը լիարժեք կհամագործակցեն նաև ընդլայնման և վերակառուցման նախագծերի մշակման գործում, ընդ որում դրանց մշակումը, համաձայնեցումն ու հաստատումը պետք է իրականացվեն 22 օրենսդրությամբ սահմանված կարգով, 2 ամսվա ընթացքում, և շինարարության ավարտից հետո 22 ընդունված կարգի</p>



engineers it employs in getting any permissions required under the legislation of the Republic of Armenia and the Municipality of Yerevan during the review period, approval of all necessary documentation, licenses, (architects, engineers, construction company, AR/VR IT company, etc.), and construction and certificates of Occupancy permits, and the implementation of the Project.

(E) The design of the building shall be selected through a competition run Armenia-wide and beyond. A selection committee comprising of representatives of the Foundation, their designated architect along with the Yerevan City Architect's office will be formed to evaluate submitted projects. All final designs and selections should be agreed by the Balian Foundation. The architectural firm designing the project may not charge more than \$50,000.00 for the totality of the project: design, sketches, architectural and engineering drawings necessary for permits, plumbing, HVAC, and electrical drawings, obtaining the permits, supervising the construction and engineering work until completion and attainment of Certificates of Completion for Occupancy.

(F) All designs, blueprints, and other preparatory material shall be the property of the Foundation and may not be used by the Municipality, the Museum or any other entity for any other purpose. The Foundation shall turn over ownership of these materials to the Erebuni Museum upon completion of the Project. Once construction permits and approvals received, other than the routine inspections of the construction (as per practice for any construction site), there will be no illegitimate interference.

(G) Any Contractors for provision of works and services related to the implementation of the Project shall be selected by the Foundation.

(H) The Contractors and all vendors implementing construction and related works and services shall be contracted by the Foundation as the donor and will be paid directly by Foundation. Any other Contractors shall be contracted directly by the Foundation.

(I) The Yerevan Municipality may increase the Erebuni Museum staffing and budget to ensure commensurate with its enhanced operations and space when necessary.

(J) The Yerevan Municipality will do its best to continue funding the Museum as it has in the past and shall continue to do so post-construction and in its new entity.

(K) The Yerevan Municipality shall be responsible for all infrastructure matters nearby Museum area (electrical, sewage, cable, vehicular and pedestrian access, road improvements, etc.), and will ensure every support to Foundation to obtain VAT exemption from all expenditures for this project.

(L) The Foundation shall be mentioned in perpetuity

համաձայն կրնդունեն շենքը: Ընտրված նախագծի հաստատումից հետո որևէ փոփոխություն կամ արգելք չի թույլատրվի և նախագիծը օրենքի սահմաններում կհարգվի այլ գերատեսչությունների կողմից: Համայնքի աշխատակազմը կաջակցի Հիմնադրամին, իր ծրագրի կառավարչին, վերջինիս վարձու ճարտարապետներին, ճարտարագետներին՝ Ծրագրի իրականացման ընթացքում ՀՀ օրենսդրությամբ պահանջվող ցանկացած թույլտվություններ, փաստաթղթեր, արտոնագրեր ստանալու և նյութերի ձեռք բերման և մատակարարներին վճարումների գործարքներում (ճարտարապետներ, ճարտարագետներ, շինարարական Ընկերություն, AR/VR SS Ընկերություն, և այլն):

(Ե) Ծինության դիզայնի նախագիծը կընտրվի Հայաստանում և սահմաններից դուրս հայտարարվող մրցույթի արդյունքում: Ներկայացվող նախագծերը գնահատող ընտրող հանձնաժողովը բաղկացած կլինի Երևանի գլխավոր ճարտարապետի գրասենյակի, Հիմնադրամի ներկայացուցչից և այլ ճարտարապետներից: Բոլոր վերջնական նախագծերը պետք է համաձայնեցվեն Հիմնադրամի հետ: Ծրագիրը նախագծող ճարտարապետական Ընկերության վճարը բոլոր կատարվելիք աշխատանքների դիմաց՝ նախագիծ, նախնական էսկիզներ, հաստատումների համար անհրաժեշտ ճարտարապետական և ճարտարագիտական գծագրեր, կոյուղու, ջեռուցման, օդափոխության, էլեկտրամատակարարման համակարգերի, շին. թույլտվությունների և վերահսկման և ինժեներական ավարտական աշխատանքների, չպետք է գերազանցի 50 000 ԱՄՆ դոլարի համարժեք դրամ:

(Զ) Նախապատրաստական աշխատանքների բոլոր նախագծերը, պատճեններն ու գծագրերը կհանդիսանան Հիմնադրամի սեփականությունը, և չեն կարող օգտագործվել ոչ Քաղաքապետարանի, ոչ էլ Թանգարանի կամ այլ երրորդ անձի կողմից կողմնակի նպատակներով: Ծրագրի ավարտին Հիմնադրամը կփոխանցի վերը նշված բոլոր փաստաթղթերը Էրեբունի թանգարանին: Ծինարարության թույլտվություններ և հաստատումներ ստանալուց հետո Օրենքով չնախատեսված ցանկացած միջամտություն, բացառությամբ անհրաժեշտ ստուգումների, անթույլատրելի է:

(Է) Ծրագրի իրականացման հետ կապված աշխատանքների և ծառայությունների մատուցման նպատակով ցանկացած կապալառու ընտրվում է Հիմնադրամի կողմից:

(Ը) Ծինարարական, հարակից և մատակարարման աշխատանքներն ու ծառայություններն իրականացնող կապալառուների հետ պայմանագրերը կկնքվեն Հիմնադրամի կողմից իբրև Նվիրաբերողի և անմիջականորեն վճարելու են Հիմնադրամի կողմից: Հիմնադրամն անմիջականորեն պայմանագրեր է կնքելու ցանկացած այլ կատարողների հետ,

(Թ) Երևան համայնքը անհրաժեշտության դեպքում աճի առումով կարող է վերանայել Էրեբունի թանգարանի հաստիքացուցակը և բյուջեն, այն համապատասխանեցնելով նոր ձևափոխություններին/մակերեսին և գործառույթներին համապատասխանության:

(Ժ) Վերակառուցումից հետո Երևանի քաղաքապետարանը




<p>as the donor of the Project and extension. Upon initiation of the project and in perpetuity there will be clearly visible and prominently displayed exterior exhibits and interior plaques that acknowledge the Foundation's donation and sponsorship of the museum extension and renovations. The location and content of these displays and plaques shall be determined in the final architectural plans. Removal of the plaques at any period will be considered a breach of present Agreement.</p> <p>(M) The intent of the Parties shall be to use the revenues generated from the Project to subsidize the operational costs as well as to upgrade the Project's exhibitions primarily when supplemental funds become available.</p> <p>(N) Yerevan Municipality will be responsible for its Administration high-positioned officer assignment to coordinate Project's smooth facilitation.</p>	<p>իր լավագույն ջանքերը կգործադրի Թանգարանի ֆինասավարուրը նախկինի նման շարունակելու ուղղությամբ:</p> <p>(Ի) Երևան համայնքը պատասխանատու կլինի Թանգարանի մատույցներում գտնվող ենթակառուցվածքների համար (էլեկտրական էներգիա, ջրամատակարարում, կոյուղի, անցումներ, ճանապարհներ և այլն) և իր լավագույն ջանքերը կգործադրի աջակցելու Հիմնադրամին այս Ծրագրի իրականացման հետ կապված ծախսերը ԱԱՀ-ից ազատելու նպատակով:</p> <p>(Լ) Հիմնադրամը պետք է շարունակաբար նշվի որպես Ծրագրի և ընդարձակման նվիրատու:</p> <p>Ծրագրի մեկնարկից և շարունակաբար այդ տարածքում պետք է ակներև տեղակայված լինեն արտաքին տեղեկատվական ցուցանակներ և ներքին հուշատախտակներ, որոնք կտեղեկացնեն Բայան հիմնադրամի, իբրև Ծրագրի բարերար և նվիրաբերողի մասին: Այդ ցուցանակների և հուշատախտակների տեղաբաշխումը կկարգավորվի վերջնական դիզայն-նախագծում, և դրանց հեռացումը կդիտարկվի իբրև սույն պայմանագրի խախտում:</p> <p>(Խ) Կողմերի մտադրությունն է օգտագործել Ծրագրից ստացված եկամուտները՝ գործառնական ծախսերը ծածկելու, ինչպես նաև առաջին հերթին Ծրագրի ցուցասրահները բարելավելու համար, երբ հասանելի են դառնում լրացուցիչ միջոցներ:</p> <p>(Օ) Քաղաքապետարանը պարտավորվում է Ծրագրի իրականացման ընթացքը սահուն ապահովելու նպատակով իր աշխատակազմից բարձրաստիճան պաշտոնյա նշանակել իբրև համակարգող:</p>
<p><b>4. Confidentiality.</b> The parties agree to apply strict confidentiality to the existence and the contents of this Agreement, including any information shared or obtained in accordance with this Agreement. The Parties may share any information related to the Project and its content publicly and/or with third parties only after the execution of a Agreement between the Parties and following joint authorship, review and agreement of such communications (e.g., press releases).</p>	<p>4. Գաղտնիություն. Կողմերը համաձայնում են պահպանել սույն Պայմանագրի և վերջինիս բովանդակության խիստ գաղտնիությունը, ներառյալ սույն Պայմանագրի համաձայն բացահայտված կամ ձեռք բերված ցանկացած տեղեկատվություն: Կողմերը կարող են Ծրագրին և վերջինիս բովանդակությանը վերաբերող տեղեկատվություն հրապարակել և/կամ հաղորդել երրորդ անձի միայն Կողմերի միջև սույն պայմանագրի ստորագրումից հետո՝ այս փաստաթղթում սահմանված ծավալով:</p>
<p><b>5. Approval.</b> This Agreement becomes into full force after Yerevan City Magistrate's approval.</p>	<p>5. Վավերացում. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Երևանի ավագանու կողմից հավանության արժանանալու դեպքում:</p>
<p><b>6. Governing Law.</b> This Agreement and all matters thereto shall be governed by and construed in accordance with the legislation of the Republic of Armenia, without giving effect to the conflict of laws principles, and will stay in full force irrespective of any future successive Administration.</p>	<p>6. Կիրառելի իրավունք. Սույն Պայմանագիրը և վերջինիս հետ կապված բոլոր հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան առանց կոլիզիոն նորմերին գերակայություն տալու, և ուժի մեջ կմնա անկախ որևէ ապագա իրավահաջորդ աշխատակազմի:</p>
<p><b>7. Binding Agreement.</b> This Agreement shall constitute a legally binding and enforceable obligation on all parties. Once this agreement becomes binding and funds are allocated and spent by Balian Foundation, in case of any breach of this Agreement</p>	<p>7. Պարտադիր բնույթ. Սույն Պայմանագիրը իրենից ներկայացնում է իրավական և պարտադիր կատարման ենթակա պարտավորություն կողմերի համար: Սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից Հիմնադրամի կողմից ծախսված ֆինանսական միջոցները կփոխհատուցվեն</p>




and of effective law, i. e. withdrawal of construction permits, the Yerevan Municipality will refund any funds already spent back to the Balian Foundation or designee. In case of Balian Foundation withdrawal from project facilitation with whatsoever reasons, the latter will compensate all expenses, required for finishing construction or demolishing unfinished building up to the \$1.3 million construction amount of the total Project cost.	քաղաքապետարանի կողմից, եթե վերջինս օրենսդրության խախտմամբ կչեղարկի սույն Պայմանագիրը և/կամ ծրագրի շրջանակներում տրամադրված շինարարության թույլտվությունները: Հիմնադրամը ծրագրի իրականացման որևէ փուլում ծրագիրը անավարտ թողնելու դեպքում Քաղաքապետարանին կհատուցի այն ավարտին հասցնելու անհրաժեշտ ծախսերի կամ անավարտ (կիսակառույց) շինությունը քանդելու հետ կապված բոլոր ծախսերի գումարը շինարարության արժեքի՝ 1.3 մլն. ԱՄՆ դոլարին համարժեք դրամի սահմաններում:
---	---

<b>8. Miscellaneous.</b> This Agreement contains the entire understanding between the Parties and supersedes all previous agreements, if any, between the Parties concerning the same or substantially similar subject matter. This Agreement may be amended, supplemented or otherwise modified only in writing signed by duly authorized representatives of each party. This Agreement will be executed in two copies, each of which shall be deemed an original. The section headings are for reference purposes only and shall not otherwise affect the meaning, construction or interpretation of any provision in this Agreement.	<b>8.Այլ դրույթներ.</b> Սույն Պայմանագիրը հանդիսանում է Կողմերի միջև ամբողջ համաձայնությունը և փոխարինում է Կողմերի միջև նույն կամ էականորեն նույնական առարկայի վերաբերյալ նախկին բոլոր համաձայնությունները: Սույն Պայմանագիրը կարող է լրացվել կամ այլ կերպ փոփոխվել միայն գրավոր՝ Կողմերի լիազորված ներկայացուցիչների պատշաճ ստորագրությամբ: Սույն Պայմանագիրը ստորագրվում է երկու օրինակից, որոնցից յուրաքանչյուրը համարվում է բնօրինակ: Բաժինների վերնագրերը նախատեսված են միայն հղումների նպատակով և որևէ այլ կերպ չեն ազդում որևէ դրույթի իմաստի, կառուցվածքի կամ մեկնաբանման վրա:
---	---

<b>IN WITNESS WHEREOF,</b> the Parties have executed this Agreement as of the date set forth below:	Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՎԵՐՈՒԳՐՅԱԼԻ՝ Կողմերը ստորագրում են սույն Պայմանագիրը ներքոհիշյալ ամսաթվին.
---	---



John D. Balian, MD	Ջոն Դ. Բալյան
Date/Ամսաթիվ <u>03/10/2019</u>	



Hayk Marutyan	Հայկ Մարության
Mayor of Yerevan	Երևանի քաղաքապետ
Date/Ամսաթիվ <u>03/10/2019</u>	